

ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի համաձայն՝ ե՞րբ են հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ավելացվում ակտիվի հաշվեկշռային արժեքին՝

ա) երբ դրանք հանգեցնում են նրան, որ հիմնական միջոցից կազմակերպություն կներհոսեն ավելի մեծ չափով տնտեսական օգուտներ, քան ակնկալվում էր այդ հիմնական միջոցի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից.

բ) հիմնական միջոցի վրա կատարված ցանկացած ծախս ավելացվում է ակտիվի հաշվեկշռային արժեքին.

գ) հիմնական միջոցի վրա կատարված ցանկացած ծախս ավելացվում է ակտիվի հաշվեկշռային արժեքին, եթե այն գերազանցում է սկզբնական արժեքի մեկ տոկոսը:

2. ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտի համաձայն՝ արտարժույթով դրամային հոդվածների մարման կամ հաշվեկշռի ամսաթվի դրությամբ դրանց վերահաշվարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունների արդյունքը՝

ա) երբ այն առաջացել է արժույթի ուժեղ արժեզրկման հետևանքով, որը ազդել է վերջերս ակտիվների ձեռք բերումից առաջացած պարտավորությունների վրա, փոխարժեքային տարբերությունների արդյունքը չեն կարող ներառվել այդ ակտիվների հաշվեկշռային արժեքում, եթե կազմակերպությունը ընտրել է հաշվապահական հաշվառման այդ քաղաքականությունը.

բ) երբ այն առաջացել է արժույթի ուժեղ արժեզրկման հետևանքով, որը ազդել է վերջերս ակտիվների ձեռք բերումից առաջացած պարտավորությունների վրա, փոխարժեքային տարբերությունների արդյունքը կարող է ներառվել այդ ակտիվների հաշվեկշռային արժեքում, եթե կազմակերպությունն ընտրել է հաշվապահական հաշվառման այդ քաղաքականությունը, մնացած դեպքերում փոխարժեքային տարբերությունների արդյունքը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս.

գ) բոլոր դեպքերում փոխարժեքային տարբերությունների արդյունքը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

3. «Փոխառության ծախսումներ» ՀՀՄՍ 23-ի համաձայն՝ ո՞րն է համարվում որակավորվող ակտիվ՝

ա) այն ակտիվը, որին անհրաժեշտ է ժամանակի մի զգալի հատված, որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար.

բ) այն ակտիվը, որն ըստ էության պատրաստ է ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար.

գ) այն ակտիվը, որը պահվում է բացառապես արժեքի աճի ակնկալիքով:

4. Ո՞ր իրավական ակտերով են սահմանվում հարկային արտոնությունները՝

ա) Հարկային արտոնությունները սահմանվում են բացառապես Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով.

բ) Հարկային արտոնությունները սահմանվում են կառավարության որոշմամբ.

գ) Հարկային արտոնությունները սահմանվում են ՊԵԿ նախագահի հրամանով:

5. Ո՞ր դեպքում է ապրանքի մատակարարման վայրը համարվում Հայաստանը՝

ա) ապրանքի մատակարարման վայրը համարվում է ՀՀ-ն, բացառապես այն դեպքում, երբ ապրանքը մատակարարման պահին գտնվում է ՀՀ տարածքում.

բ) ապրանքի մատակարարման վայրը համարվում է ՀՀ-ն, եթե ապրանքի մատակարարման պահին այն գտնվում է ՀՀ տարածքում, կամ եթե ապրանքն արտահանվում է ՀՀ-ից.

գ) ապրանքի մատակարարման վայրը համարվում է ՀՀ-ն, բացառապես այն դեպքում, երբ ապրանքը արտահանվում է ՀՀ տարածքից:

6. Ապրանքի մատակարարման գործարքը ո՞ր դեպքում չի համարվում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ՝

ա) երբ գործարքն ազատված է ԱԱՀ-ից.

բ) երբ ապրանքի մատակարարման վայրը չի համարվում ՀՀ-ն.

գ) երբ ապրանքները ներմուծվում են ՀՀ տարածք:

7. Ո՞ր դեպքում է թեթև մարդատար ավտոմեքենայի ձեռքբերման ԱԱՀ-ի գումարը հաշվանցման ենթակա՝

ա) երբ թեթև մարդատար ավտոմեքենան օգտագործվում է վարձույթով տրամադրելու համար.

բ) երբ թեթև մարդատար ավտոմեքենան օգտագործվում է վարչական նպատակներով:

գ) երբ թեթև մարդատար ավտոմեքենան օգտագործվում է իրացումը կազմակերպելու նպատակներով:

8. Արտադրության գործընթացում գտնվող չվերականգնվող խտանված արտադրանքի փաստացի ինքնարժեքի արտացոլում՝

ա) Դեբետ 814

Կրեդիտ 811.

բ) Դեբետ 711

Կրեդիտ 814.

գ) Դերենտ 714

Կրեդիտ 811:

9. Կազմակերպության վարչական նշանակության շենքի կառուցման համար ծախսված նյութերի արտացոլում՝

ա) Դերենտ 118

Կրեդիտ 211.

բ) Դերենտ 821

Կրեդիտ 211.

գ) Դերենտ 713

Կրեդիտ 211:

10. Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով հաշվարկված տույժերի ու տուգանքների արտացոլում՝

ա) Դերենտ 331

Կրեդիտ 525.

բ) Դերենտ 714

Կրեդիտ 525.

գ) Դերենտ 342

Կրեդիտ 525:

«2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՑՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՑԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

«ԳԱՄՄԱ» կազմակերպությունը ստեղծվել է 2018թ. և մինչև 01.09.2018թ. աշխատել է շրջանառության հարկի դաշտում: 01.09.2018թ.. դրությամբ շրջանառության հարկից չնվազեցված և հաջորդ հաշվետու ժամանակաշրջաններ տեղափոխված գումարը կազմել է 2500 հազ. ՀՀ դրամ:

2018թ. սեպտեմբերի 1-ից հետո կատարված գործարքների արդյունքում ունեցել է հետևյալ ցուցանիշները՝

Եկամուտներ /հազ. ՀՀ դրամ/

1	Մեծածախ իրացումից	120 000
2	Մանրածախ իրացում	150 000

3	տոկոսային եկամուտ	15 800
4	Այլ պասիվ եկամուտներ	23 000
5	Շահաբաժին	5 200
6	Անհատույց ստացված հոդմաս /կադաստրային արժեք/	18 000

Ծախսեր /հազ. ՀՀ դրամ/

1	Վաճառված ապրանքների սկզբնական արժեք	190 600
2	Բանկից ստացված վարկի գծով տոկոսային ծախսեր	25 000
3	Վճարված շահաբաժին	10 800
4	Գործուղման ծախսեր	48 000
5	Ներկայացուցչական ծախսեր	15 600
6	Անհատույց տրամադրված հոդմաս /կադաստրային արժեք/	42 300

Լրացուցիչ տվյալներ`

1. 2018թ. արդյունքներով զուտ ակտիվների մեծությունը կազմել` 0 դրամ:
2. Անհատույց ստացված հոդմասի վրա կատարվել են 1000 հազ. ՀՀ դրամ արժեքով բարելավման աշխատանքներ:

Որոշել`

1. 2018թ. վճարման ենթակա շահութահարկի գումարը.
2. 20.06.2019թ. վճարման ենթակա շահութահարկի եռամսյակային կանխավճարի չափը:

ԼՈՒԾՈՒՄ

եկամուտներ

1	Մեծածախ իրացումից	120 000	120 0000
2	Մանրածախ իրացում	150 000	125 000
3	տոկոսային եկամուտ	15 800	15 800
4	Այլ պասիվ եկամուտներ	23 000	23 000
5	Շահաբաժին	5 200	5 200
6	Անհատույց ստացված հոդմաս /կադաստրային արժեք/	18 000	450
7	Անհատույց տրամադրված հոդմասից /կադաստրային արժեք/	42 300	42 300
	Ընդ եկամուտ		331 750

ծախսեր

1	Վաճառված ապրանքների սկզբնական արժեք	190 600	190 600
2	Բանկից ստացված վարկի գծով տոկոսային ծախսեր	25 000	25 000
3	Վճարված շահաբաժին	10 800	-
4	Գործուղման ծախսեր	48 000	16 587
5	Ներկայացուցչական ծախսեր	15 600	1 658
6	Անհատույց տրամադրված հոդմաս /կադաստրային արժեք/	42 300	-
7	Ընդհանուր հարկմն դաշտ անցնելու ժամանակ չնվազեցված ապրանքային մնացորդ	-	62 500
	Ընդ ծախսեր		296 345

Հարկվող շահույթ՝ 35 405

Շահութահարկ՝ 7 081

Կանխավճար՝ 2 832